ընծայ էր բերած մէկ մեծ գլուխ շաքար և մէկ սինով չոր ձուկն, և երեք մանէթ ժամուց. Աստուած շէն պահէ. փոխարէն Քրիստոս վարձատրէ։

5ն յուլսի Վարդաւար. քահանայն պատարագիչ և թօփալս Քրիստոսի մարմին և արուն ճաշակող։ Վանքումս գինի չկար, ուղարկեցի Մատրասա գիւղն. 4. ման գինի բերին մէկ մանէթի. վանքիս կարասներն դատարկութեամբ լի է։

Երիցս երանեալ Սրբազան Հովապետ։
Ամենաողորմած տէր։

Խոնար յայտարարութիւն։

Ձերդ բարձր Վեհապետութեանն չունիմ գիր. բայց սինօթականաց ոմն թօփալիս գրէ թէ՝ բարի հաճեցաւ. սրբազան Հովապետն վասն քոյ որ երթաս աքուլեաց վանքն ի կառաւարութիւն. բարոք էք արարել ականջիցն հանել էք տչկն էք դրել կասեն. իմ հասակս և իմ տկարութիւնս նա և կարողութիւնս չեն տալիս որ կարողանամ ազգին ծառայել. մեռած եմ թաղվաց չեմ. կոճղեմ անպիտան ոչ հոգոյ եմ և ոչ մարմնոյ, խընաեցէք փթեալ և թոփալ ծերոյս. տվէք մուղնու վանքն, անդ օրս անցուցանեմ, և թէ անդ եւս չէք կամենալ, թողէք իմ գեղումն նստեմ և թէ՝ անդ եւս չէք կամենալ, այն է որ բողոքս առ Աստուած և առ կայսր կուհասուցանեմ, քո անվանդ լաւ չէ. մտածեայ վերջին դատաստան, յորում շատ տվաւ շատ վրէժ կուտայ. անկեալ կոճդիս երկու ամաց բանդս սովով ծարաւով և մերկութեամբ անմարդաբնակ տեղիս, բաւական չես համարում. դարձիր դարձիր սպառնալիցդ և քեզ օր կա որ հարցումն կանեն։ Ես յամենայն ժամ զԱստուած աղաչեմ որ հոգոյդ փրկութիւն լինի. մարմնով փառաւոր ես, ջանացիր որ հոգով եւս փառաւորիս. այլոց ասութեանն մի հաւատալ նոքայ քո հոգւոյդ բարեկամ չեն այլ սեղանանիդ են բարեկամ. ես եմ քո հոգոյդ և քո հովապետութեան բարեկամն. գրիր հրաման որ գամ Թիֆլիզ իմ ճշմարիտ բարեկամութիւնս բանիւ ցոյց տամ. և իմ պակասութիւնն հոգամ ապա ելանեմ այտի և ուր Աստուած մեզաւորիս կամեցելայ անդ դադարիմ։